ռիարքական հրովարտակը ստանալ (*Զամիչեան*, *Հայոց Պատմութիւն*, *Գ. հտ. էջ* 692) *և գարձաւ Պոլիս*, *ուր գրաւեց պատրիարքական աթոռը ըստ Հրանտ Ասատուրի* (*Ընդ. Օրացոյց*, 1901, *էջ* 105). 1663 *Փետրուարին և ըստ* J. M. Yovannin *և* Jules Van Ganer*ի* (Turquie, Paris 1850, *էջ* 272) 1663 *Մարտին*, *և որպէսզի ապահով ըլլայ՝ Ղազարը բանտարկել տուաւ* (*Զամիչեան*, *նոյն*, *էջ* 693)։

Յովհաննէս պատրիարք, *ինչպէս կը թուի*, *այն ատեն արդէն Արքեպիսկոպոս էր*, *վասնզի այսպէս կը յիշատակուի Վենետիկի Մխիթարեանց քով պահուած ձեռագիր Սաղմոսարանի մը մէջ* (*թ*. 76), *որ գրուած է* «*ի մայրաքաղաքն Տրապիզոն* ... *ի հայրապետութեան Հայոց Տէր Յակոբ կաթողիկոսին*, *ու ի յառաջնորդութեանն սուրբն Երուսաղէմայ Եղիազար վարդապետի*, *եւ ի պատրիարքութեանն տէր Յովհաննէս արհիեպիսկոպոսին* ... *ի թուականիս Հայոց ՌՃԺԲ* (1112+551=1663) *ամի Յուլիս ամսոյ ԺԱ* (11)» (*Հ*. *Բարսեղ վրդ*. *Սարգիսեան*, *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, *էջ* 240)։

Յովհաննէս՝ պատրիարք դառնալէն յետոյ, *ինչպէս կ'ըսէ Զամիչեան*, *գիտնալով որ երկար ատեն չէր կրնար մնալ այդ իշխանութեան վրայ*, *զոր ստացած էր ամէնուն կամքին հակառակ*, *սկսաւ իր Հարազներով տարածել սա գաղափարը*, *թէ ինք պատրիարք եղած էր ընկճելու համար Էջմիածինի հակառակորդները*, *և ինչ որ ինք կը պարտէր Մայր-Աթոռին՝ պիտի հատուցանէր ամբողջովին։ Այսպէս ի նպաստ իր անձին չահագործել կ'ուզէր իր նախորդին՝ Ղազար Սեբաստացիի Մայր-Աթոռի հակառակորդ ըլլալը։ Ինչպէս պատրիարքութեան հասնելու*, *նոյնպէս նաև զայն*